



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

”11” հոկտեմբեր 2013 թ.

թիվ 55-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԶԵՎ ԹԻՎ 6 (ԳՅՈՒՂԱԿԱՆ) ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում գյուղերի հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիրը»՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՑԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում

	Հավելված
	Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 55-Ա որոշման
Հաշվառման տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի համարը

Ձև թիվ 6-գյուղական

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ

Հաշվային տեղամաս N-----() (կազմված է-----թերթերից)

Մարզ-----Տարածաշրջան-----

Գյուղական համայնք-----Բնակավայր-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(լրացվում է հրահանգիչ- հսկիչի կողմից)

Փորձնական գյուղատնտեսական հաշվառման ժամանակ հաշվարարի կողմից սխալ գրառումներ են կատարվել տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերի և/կամ գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվության լրացման ժամանակ										
Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հատ</i>					
Վարելա-հող	Պտղատու այգի և հատապտղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտավայր	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխարներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուններ, ընդամենը
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10</i>	<i>11.</i>

Ընդամենը (քանակը)

Գյուղական համայնքներ/բնակավայրեր-----

Հարցաթերթեր -----

Հարցաթերթի հավելվածներ-----

Ուղեկցող թերթեր (Ձև թիվ 10)-----

ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

գրառում է ամփոփ տեղեկագրի լրացման ամսաթիվը և ստորագրում է այն։

13. Լրացված հարցաթերթերի և հարցաթերթի հավելվածների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև ամփոփ տեղեկագրի դիմային էջի ներքևի ձախ անկյունում։

14. Եթե ամփոփ տեղեկագիրը լրացվում է մի քանի թերթով, ապա հաշվարարը հաշվարկում և լրացնում է ամփոփ տեղեկագրի հանրագումարներն ըստ յուրաքանչյուր էջի՝ «Հաշվառված է հաշվարարի կողմից-ընդամենն ըստ էջի» տողում, իսկ **ամփոփ տեղեկագրի վերջին թերթի վրա** լրացնում է նաև հաշվային տեղամասի հանրագումարը, որը ստացվում է առանձին էջերի հանրագումարները գումարելով։

15. Հաշվառման ամբողջ ժամանակահատվածում հրահանգիչ-հսկիչը մանրագնին հետևում է ամփոփ տեղեկագրի ճիշտ լրացմանը՝ ուշադրություն դարձնելով հարցաթերթից յուրաքանչյուր տնտեսությանը վերաբերող տվյալների ճիշտ արտագրմանը։

16. Հաշվառման ավարտից հետո (մինչև վերահսկիչ շրջայցը սկսելը) հրահանգիչ-հսկիչը, հաշվառման նյութերը հաշվարարներից ընդունելու ժամանակ, համեմատում է ամփոփ տեղեկագրում տնտեսությունների քանակը հաշվառման հարցաթերթերի տվյալների հետ, ստուգում է հանրագումարների ճշգրտությունը և, եթե կան սխալներ, ապա ուղղում դրանք։

17. Վերահսկիչ շրջայցի ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով վերահսկիչ շրջայցի ժամանակ հաշվառման հարցաթերթերում կատարված բոլոր փոփոխությունները, ուղղումներ է մտցնում ամփոփ տեղեկագրի **6-16-րդ** պունակներում, որտեղ փոփոխություն է կատարվում՝ սխալ լրացված թվի վրա գիծ քաշելով և ճիշտը գրելով։

«Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հանրագումարները չեն ուղղվում։

18. Հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով կատարված ճշգրտումները, հաշվում է հանրագումարներն ըստ յուրաքանչյուր էջի և ամբողջությամբ ըստ հաշվային տեղամասի և գրառում է դրանք **«Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը»** համապատասխան տողերում։ Ուղղումներ չլինելու դեպքում այդ տողերում կրկնվում են «Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հաշվարարի կողմից կատարված գրառումները։

19. Ամփոփ տեղեկագրի դիմային էջի «Վերահսկիչ շրջայցի արդյունքները» բաժինը լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից՝ վերահսկիչ շրջայցի ավարտից հետո, հրահանգիչ-հսկիչի հուշատետրի 4-րդ աղյուսակի տվյալների հիման վրա, որտեղ նշված են այն բոլոր դեպքերը, երբ հաշվառման ընթացքում հաշվարարի կողմից տնտեսության հարցաթերթում կատարվել են սխալ գրառումներ։ Վերահսկիչ շրջայցի արդյունքները բաժինը ամփոփ տեղեկագրի «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը» և «Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերի ցուցանիշների տարբերությունն է՝ ըստ համապատասխան պունակների՝ «+» նշանով, եթե հաշվարի կողմից կատարված գրառումների հետ համեմատած վերահսկիչ շրջայցի արդյունքում տվյալ ցուցանիշի հանրագումարն ավելացել է և «->» նշանով, եթե ցուցանիշի հանրագումարը նվազել է։

20. Վերահսկիչ շրջայցի ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը գրառում է վերահսկիչ շրջայցի ամսաթիվը և ստորագրում է ամփոփ տեղեկագիրը։

21. Եթե ամփոփ տեղեկագիրը կազմված է մի քանի թերթից, ապա ստորագրությունը և ամսաթիվը դրվում է միայն վերջին թերթի վրա։

Ցուցումներ գյուղերի հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 6-գյուղական**) լրացվում է հաշվարարի կողմից փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ փորձնական ԳՀՀ) ժամանակ և հետագայում օգտագործվում փորձնական ԳՀՀ նախնական արդյունքները ստանալու համար։

2. Ամփոփ տեղեկագրի աջ անկյունում առանձնացված վանդակներում լրացվում են հաշվառման և հրահանգչական տեղամասերի համարները, իսկ հասցեամասում՝ հաշվային տեղամասի համարը։

3. Եթե հաշվային տեղամասի բոլոր տնտեսությունների գրառման համար ամփոփ տեղեկագրի մեկ թերթը չի բավականացնում, ապա գրառումը շարունակվում է տեղեկագրի մյուս թերթերի վրա։ Այդ դեպքում առաջին թերթի վրա՝ հաշվային տեղամասի համարից հետո, փակագծերում գրվում է ա տառը, իսկ երկրորդում՝ ք տառը (օրինակ՝ 3 (ա), 3 (ք) և այդպես շարունակ։

4. Հաշվային տեղամասի հասցեամասը լրացվում է ամփոփ տեղեկագրի յուրաքանչյուր թերթի վրա, իսկ թերթերի քանակը գրվում է միայն առաջինի վրա։

5. Հաշվարարն ամփոփ տեղեկագիրը լրացնում է ամեն օրվա վերջում՝ տվյալ օրվա ընթացքում լրացված հարցաթերթերի համար՝ ըստ դրանց հաջորդական համարի։

6. Աղյուսակի 1-ին սյունակում գրվում է համայնքի և բնակավայրի լրիվ անվանումը։ Կրկնության դեպքում հաջորդ տողերում կարելի է դնել կրկնության նշան։

7. 2-րդ սյունակում լրացվում է տնտեսության հասցեն՝ փողոցի անվանումը և տան համարը։

8. 3-րդ սյունակում լրացվում է տնտեսության գլխավորի ազգանունն ու անվան, հայրանվան սկզբնատառերը, 4-րդ սյունակում գրառվում է տվյալ տնտեսության համար լրացրած հաշվառման հարցաթերթի համարը, իսկ 5-րդ սյունակում, ***եթե լրացվել է նաև 1-ԳՀՀ հարցաթերթի հավելված***, լրացված հավելվածների քանակը։ Եթե հարցաթերթի հավելված (ներ) չի (չեն) լրացվել, ապա գծիկ է դրվում։

9. Ամփոփ տեղեկագրի 6-10-րդ սյունակները լրացվում են տվյալ տնտեսության համար լրացված հարցաթերթի 9-րդ հարցի գյուղատնտեսական նշանակության և/կամ տնամերձ հողերի վերաբերյալ տեղեկությունների հիման վրա։

Օրինակ՝ արտագրվում են հարցաթերթի 3-րդ էջի 9-րդ աղյուսակից 15, 16, 17, 18 և 19 կողերին համապատասխանող 4-րդ սյունակի համապատասխան տվյալները։

10. Նույն սկզբունքով պետք է առաջնորդվել նաև ամփոփ տեղեկագրի 11-16-րդ սյունակների լրացման ժամանակ։

Օրինակ՝ հարցաթերթի 9-րդ էջի 15-րդ աղյուսակից խոշոր եղջերավոր անասուններ՝ 01, որից՝ կովեր՝ 02, խոզեր՝ 13, ոչխարներ 19, այծեր՝ 24 և թռչուններ՝ 39 կողերին համապատասխանող 1-ին սյունակի համապատասխան տվյալներն արտագրելով։

11. Հարցաթերթից նշված տեղեկատվությունն արտագրելու ժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել ամփոփ տեղեկագրի 6-16-րդ և հարցաթերթի համապատասխան սյունակներում գրառվածի համապատասխանությանը։

12. Եթե հաշվային տեղամասի մեջ ներառված են մի քանի գյուղեր, ապա հաշվարարը սկզբում հաշվարկում և գրառում է մի գյուղի վերաբերյալ տվյալների հանրագումարները, այնուհետև՝ մյուսի և այսպես շարունակ։ Բոլոր բնակավայրերի վերաբերյալ տվյալները ամփոփ տեղեկագրում գրառելուց հետո հաշվարարը հաշվում է 6-16-րդ սյունակների հանրագումարներն ամբողջությամբ ըստ հաշվային տեղամասի և գրառում դրանք «Հաշվառված է հաշվարարի կողմից-ընդամենն ըստ հաշվային տեղամասի» տողում, ստուգում է հաշվարկների ճշգրտությունը,

ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ
(լրացվում են տեղեկություններ յուրաքանչյուր տնտեսության վերաբերյալ)

Գյուղական համայնքի/ բնակավայրի անվանումը	Փողոցի անվանումը, տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունն ու անվան, հայրանվան սկզբնատառերը	Լրացված հարցա- թերթի համարը	Լրացված հարցա- թերթի հավել- վածների քանակը	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (տվյալ համայնքում / բնակավայրում)										
					Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>					Գյուղատնտեսական կենդանիներ, <i>գլուխ / հատ</i>					
					Վարելա- հող	Պտղատու այգի և հատապտ- ղանոց	Խաղողի այգի	Խոտհարք	Արոտա- վայր	Խոշոր եղջերավոր անասուն- ներ, ընդամենը	որից՝ կովեր	Խոզեր, ընդամենը	Ոչխար- ներ, ընդամենը	Այծեր, ընդամենը	Թռչուն- ներ, ընդամենը
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>	<i>11.</i>	<i>12.</i>	<i>13.</i>	<i>14.</i>	<i>15.</i>	<i>16.</i>
Հաշվառված է հաշվարարի կողմից՝		ընդամենը՝ ըստ էջի													
		ընդամենը՝ ըստ հաշվային տեղամասի													
Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը (լրացվում է հրահանգիչ- հսկիչի կողմից)		ընդամենը՝ ըստ էջի													
		ընդամենը՝ ըստ հաշվային տեղամասի													